

ՌՈՒՋԱՆ ԴՈՂՈՍՅԱՆ

ՍԵՄԱԿԱՆ ԱՐԱՄԻ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ս. ԳՐՈՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Մաշտոցի անվան Մալեմադարանի երբայեցեքեն ձեռագրերն ուսումնասիրելու ընթացքում կողքի-կողքի դնելով Նին կրակարանի Ծննդոց գրքի երբայեցեքեն ու հայերեն տեքստերը, նկատեցինք անձնանունների և տեղանունների թարգմանական որոշ տարբերություններ՝ որոնցից մի քանիսն ուշագրավ են հայագիտության հետ ունեցած աղերսներով:

Նին կրակարանը, ինչպես հայրնի է, գրի է առնվել Բրիսպոսից առաջ մոտավորապես Ը- Բ դարերում և պահպանվել է երկու խմբագրությամբ՝ հին երբայական և «յոթանասնից», որոնք որոշ չափով բնագրական տարբեր ընդգրկում ունեն:

Աստվածաշնչի քննական բնագրի հայերեն լավագույն՝ Ն. Զոհրապյանի (1805թ. Վենետիկ) հրատարակությունը համեմատելով Երուսաղեմում 1958 թվականին հրատարակված երբայեցեքեն Նին կրակարանի հետ, որը, ինչպես նշված է առաջաբանում, համապատասխանում է Դավիթ թագավորի օրոք Սիրիայի հարավում գոյություն ունեցած **Արամ Յովա** (ըստ ասորական աղբյուրների նաև Յովաբի, Յովաբու) թագավորության ձեռագրերին, կարելի է նկատել որոշ հակասություններ, որոնց թվում է նաև **Արամ Յովա** անունը, որը ստուգաբանելու երբայագետների բոլոր փորձերը, ինչպես նշված է հրեական հանրագիտարանում, անցել են ապարդյուն, և առ այսօր այդ անունը որևէ բացատրություն չի ստացել¹:

Երբայեցեքենում ծ հնչյունի բացակայությունը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ այդ բառը կարող էր հնչել **ծովա, ծովաբի, ծովաբու**: Աճառյանի արմատական բառարանում **ծով** բառի ստուգաբանությունը հաստատվում է մեր ենթադրությունը, ասելով, որ Կապադովկիայում **ցովալյի** բառը գործածական է **վրակ** խմսավով (84 կպղվ. ωοβαλιδί (կարդա ցովալյի)²:

Արամի ծագումնաբանական հակասությունները երկարամյա ուսումնասիրությունների նյութ են դարձել բազում երբայագետների համար, որոնց արտահայտած մի շարք տեսակետներ տեղ են գտել հրեական հանրագիտարանում: Դրանց անդրադառնալուց առաջ մեջբերենք թարգմանական մի քանի անճշտություններ, որ ակնառու են Ծննդոց և Առաջին Մնացորդաց գրքերում:

Այսպես, **Ծննունդք Ժ. 22** – ում Արամը նշված է Սեմի որդիների ցանկում, իսկ **Արամի որդիներն են՝ Ուրը, Խուլը, Գեպերը, Մեշերը**: Նայերեն թարգմանության մեջ (հունարեն տառադարձության պարզառոտ) այդ անունները նշված են **Նուս և Եմովլ և Գաթեր և Մոսր**:

Ծնունդք ԺԱ .10 -ում Սեմի որդիների ծննդաբանության մեջ Արամի անունը բացակայում է, ծննդաբանությունը սկսվում է Արվաբշադով և ավարտվում է Աբրահամով:

Առաջին Մնացորդաց Ա.17- «**Եւ որդիք Սեմայ՝ Եղամ, և Ասուր, և Արվաբսադ, և Դուդ, և Արամ և որդիք Արամայ Նուս և Եմովլ և Գաթեր և Մոսր,**

1 «Տրեական հանրագիտարան», Երուսաղեմ, 1972, էջ 582

2 Ն. Աճառյան, Նայերեն արմատական բառարան, հայր. II, Եր., 1973, էջ 468 :

Առաջին Մնացորդաց Ա. 24 - «Որդիք Սեմայ՝ Ելամ և Ասուր և Արփաքսադ, Կայինան, Սադա, Եբեր, Փաղէկ, Ռագավ, Սերուգ, Թառայ, Աբրահամ և նա ինքն է Աբրահամ»:

Ակնհայտ է, որ վերջինում Սեմի որդիների թվարկման մեջ Արամի անունը բացակայում է:

Առաջին Մնացորդացի հայերեն տեքստը եբրայեցերենի հետ համեմատելիս նկատելի են անձնանունների հետևյալ տարբերությունները:

Առաջին Մնացորդաց Բ. 9 -11. Նայեքեն - «և որդիք Եսրոմայ որք ծնան նմա. Յերամել և Ով Բամ և Բամ և Որոբել և Արամ. Արամ ծնաւ զԱմինադար և Ամինադար ծնավ զՆասոն և զԻշխան տանն Յուդահ»:

Երրայեցերեն - «Եւ Խեցոռնի որդիները, որ ծնվեցին՝ Իռախմել, Ռամ, Բլուվի և Ռամը ծնեց Ամինադավին, և Ամինադավը ծնեց Նախշոնին, Նուդայի տան իշխանին»:

Ինչպես տեսնում ենք, եբրայեցերեն բնագրում նշվում է ոչ թե Արամ, այլ Ռամ անունը, որն, ի տարբերություն Արամի, սեմական ծագում ունի և եբրայերեն նշանակում է **բարձր**:

Առաջին Մնացորդաց Բ. 23 -ում կարդում ենք՝ **«Սեզուրի որդի Յաիրը, որն ուներ 23 քաղաք և գյուղ, Գադաադում՝ (եբրայեցերենում՝ Գիլադ), վերցրեց Գեշուրը և Արամը, 60 քաղաք, որ պատկանում էին Գադաադի ժողովրդին»:** Պարզորոշ երևում է, որ Արամն այստեղ ոչ թե անձնանուն է, այլ տեղանուն, այսինքն՝ խոսքն Արամի երկրի մասին է:

Թարգմանական առումով ուշագրավ է նաև **Ծնունդք 11. 28** -ը, որտեղ խոսվում է Նառանի մահվան մասին՝ «Եւ Նառանը մահանում է այն երկրում, որտեղ ծնանում է՝ **յաշ-խարին քաղղեացոց**», եբրայեցերեն **יֶשְׁחָרִיִּן** - բնութ կասողիմ (բն -ն ներգոյական հոլովի մասնիկն է): Այստեղ **Ուրը** տեղանուն է և բնագրային թարգմանությունը պետք է լիներ **խաղերի Ուր երկրում**, որովհետև **կասողիմ** (իմ -ը արական սեռի հոգնակի թվի վերջավորությունն է) եբրայեցերենից անցկերեն թարգմանվում է Chaldean -כַּדְּ, այսինքն՝ խաղ, այլ ոչ քաղղեացի³: Եբրայեցերենում բարեկամացի բառը թարգմանվում է բավի -בָּבִי, քաղղեացի բառ առհասարակ գոյություն չունի, քանի որ այդ բառն առաջացել է խաղ - քաղղ տառադարձությամբ:

Շին կրակարանում տարբեր անուններով է նշվում նաև հրեաների նախնյաց ծննդավայրը: Որոշ տեղերում՝ **Ծնունդք 11. 28, 11.31, 15.7, Նեհեմիա 9.7** և այլն գրված է **יֶשְׁחָרִיִּן** - բնութ կասողիմ, իսկ **Ծնունդք 22.22, 24. 10** և այլն՝ **יֶשְׁחָרִיִּן** - Պաղան Արամ (բառացի թարգմանությամբ Արամի հարթավայր): Առաջինը հայերեն թարգմանված է **«յաշ-խարին քաղղեացոց»**, իսկ երկրորդը՝ **Ասորիք**: Այստեղ հարկ է նշել, որ ի տարբերություն հայերենի և այլ լեզուների, եբրայեցերենում չկա **արամեացի** անվանումը և գործածական է **առամի** - **אֲרָם** - արամացի բառը (ինչպես առմենի -**אֲמֵנִי**- հայաստանցի, հայ), որը հայերեն տեքստերում թարգմանվում է ասորի, մինչդեռ ասորի բառը եբրայերեն թարգմանվում է աշուրի -**אַשּׁוּרִי**:

Ինչպես հայտնի է, «արամեացիներին» ասորի կոչելը արևելագիտության մեջ բացարկվում է այն հանգամանքով, որ Ասորիքը «մ.թ.ա. II հազարամյակի վերջերին ողողվել

3 **Ռուբեն Ավիալայ**, Եբրայերեն-անգլերեն լիակատար բառարան, Երուսաղեմ, 1963, էջ 1070:

է քոչվոր արամեացիներով, որոնք անկման են հասցրել նրա փոփոխությունը: Եկվորների ազդեցությամբ Ասորիքի բնակչության լեզուն ասորիճանաբար արամեացվել է, իսկ երկիրը նրանց անուումով սկսել է հորջորջվել նաև Արամ»⁴: Ջերմ մնալով որևէ մեկնաբանությունից, այժմ փեսնենք, թե ինչ է գրված Արամի և արամացիների մասին հրեական հանրագիտարանում:

«**Արամ** - համաձայն ազգերի ծննդաբանության Նոյի որդի Սեմի որդիներից է, Արամի փոհմի անվանադիրը: Մի բանի ուսումնասիրողներ կարծիք են հայտնել, որ Արամի անունը Սեմի որդիների ծննդաբանության մեջ ավելացվել է ավելի ուշ շրջանում: Մայրերը կարծում է, որ այդ ցանկը բավականին վաղ շրջանից է, և Նախտի որդիները միավորված փոհմերի նախահայրերն են, որոնք բնակվել են Խարանի և Նախտի փարածքում՝ արևմտյան սև-միթների բնակեցման շրջանում -Ք. ծ.ա. ԺԹ- -ԺԸ դդ.: Արամի անունն այնպեղ նշվում է երի-փասարդ Էթնիկ խմբի մեջ, որը առնչվում է Նախտի որդի -Քամուելի հետ:

«**Արամ, արամի, արամիմ** (Արամ, արամացի, արամացիներ) - ընդհանրական անունն է սեմական այն ցեղերի, որոնք փարածվել են -Ք.ծ.ա. առաջին հազարամյակի կեսերին Իլե-մի և Կիլիկիայի, Տայաստանի լեռների և Արաբական թերակղզու միջև: Քոչվոր այդ ցեղերի բնակավայրերը փարածվել են նաև այդ սահմաններից դուրս, իսկ նրանց լեզվի՝ արամերենի (առամիար - ארמית) ազդեցությունը փարածվել է մինչև Փոքր Ասիայի արևմտյան մասը, Իսրայել և Եգիպտոս: Արամացիների ծագման մասին եւս Սուրբ գրքում պահպանվել են փոհություններ, որոնք առաջին հայացքից հակասում են միմյանց: Ծննդոց գրքում արամացիները նշվում են Իլեմի և Աշուրի հետ որպես Սեմի որդիներ: Արամի որդի Մեշեքի կամ Մաշի անունը փանում է դեպի Մասիոն օրոսը՝ (գրված է միայն հունարեն) այսինքն՝ Մասիս սարը:

Նախտի որդիների ցանկում (Ծնունդք ԻԲ 20-24) Արամը Նախտի որդու որդին է, այլ ոչ թե Սեմի որդին: Եւ մի բանի փոհմեր, որ մեզ հայտնի են որպես արամացիներ՝ Ուցը, Մաթեն, նաև Աեսեղը, այսպեղ հիշարակվում են որպես Արամի նախահայրերի եղբայրներ, և ոչ Արամի հետնորդներ: Սուրբ գրքոց այլ աղբյուրներում նշվում է, որ Արամի որդիների ծագման վայրը Կիրն է, որը գտնվում Բաբելոնի և Իլեմի մոտակայքում: Ավելի վաղ շրջանից մեզ հասած ազգերի ծննդաբանության մեջ կամ Նախտի որդիների անունների ցանկում Արամի անվան վերաբերյալ դեռևս չկան ամբողջական փոհություններ, արամացի համարվող ոչ բոլոր ցեղերն են առնչվել Արամի հետնորդների հետ: Չնայած հին ասորական աղբյուրներում փաստյակ ցեղեր կամ փոհմեր առաջին հայացքից կապվում են Արամի որդիների հետ, հաճախ կասկած է առաջանում՝ արդյո՞ք այդ միությունը կապված է Արամի հետնորդների, թե՛ արաբական ցեղերի հետ:

Արամացիների հզորացման մասին առաջին վկայությունները թերեւս կարելի է գտնել -Ք.ծ.ա. ԺԴ դարից մեզ հասած ասորիների և ալիսամոնների պարերագմի մասին աղբյուրներում: Ալիսամոններն արամացիներ չեն, ինչպես կարծել են մի շարք ուսումնասիրողներ, բայց Թագուր Պալասար I-ի և Ադադնիթաթի II-ի արձանագրություններում հիշարակվում են որպես «ալիսամի արամի», իսկ ավելի ուշ շրջանի ասորերենում արամացիները կոչվում են նաև ալիսամու անունով: ԺԴ-րդ դարի վերջից սկսած ալիսամու կոչվող ցեղախմբերը ասորական թագավորների աղբյուրներում հիշարակվում են որպես պարերագմի մարդիկ, ինչ-

4 «Տայկական սովետական հանրագիտարան», հատ. I, Եր., 1974, էջ 570:

պես նաև թագավորություններին ծառայություններ մատուցողներ: Նրանց բնակավայրը, ըստ Ադադնիմառի I-ի, եղել է Միջագետքի հյուսիս-արևմտյան հատվածը և կոչվել է Արամ Նահարայիմ: Ասորական մեկ այլ աղբյուր պարմում է ախլամունների պարերագմների մասին Միջագետքի փարածքում: Տարբեր վկայություններ կան այն մասին, որ ախլամունները միաբանել են իսթական թագավորության հետ ընդդեմ Ասորեստանի: Զ.Ժ.ա. ԺԱ դարում արամացիները հզոր ազդեցություն են ունեցել Միջագետքում, Սիրիայի հարավում, ինչպես նաև Բաբելոնում: Այդպես ախլամու կոչվող ցեղախմբերը գերիշխանություն են հաստատել և սրելով են փարբեր թագավորություններ, որոնք կոչվել են Արամ անունով. Միջագետքում՝ Արամ Նահարայիմ (Արամը երկու գետերի միջև), Գուգան, Սիրայի հարավում՝ Արամ Դամեշեք, որն ամենահզորն է եղել և այլն: Նրանց լեզուն եղել է արամեերեն (առամիթ), գրականությունը՝ խիլարի առակները, կենտրոնը՝ Գուգանը կամ Գուգանը⁵:

Այսպիսի հեղափոխական է այն փաստը, որ **Գուգանը** (Գուգան, Գուսան) մշակութային կենտրոն է եղել և վիթխարի ազդեցություն է ունեցել հարակից բոլոր ժողովուրդների վրա: Այդ անունը, սակայն, ոչ մի լեզվում չի պահպանվել, բացի հայերենից և, ինչպես նշված է Աճառյանի արմատական բառարանում, բնիկ հայկական բառ է: «Նայկականը» խորագրի ներքո Աճառյանը ուշագրավ փոփոխություններ է փայլա աչք բառի ծագման մասին: Սկզբում գրում է, որ *գուսան* բառը համարվում է պարսկերեն փոխառություն, սակայն մանրագնին ուսումնասիրությունները նրան հանգեցնում են այն համոզման, որ այն բնիկ պարսկերեն չէ: Նաքցն այն է, որ պարսկերեն *gosan* (ինչպես նաև *kosan*) բառը ոչ մի բացատրություն չունի: «Պահլավերեն բառարանում էլ ավանդված չէ. ոչ Horn հիշում է այն՝ իր պարսկերենի ստուգաբանական բառարանում, ոչ էլ Hubschmann իր *Persische Studien* աշխատության մեջ, որ Horn-ի ստուգաբան. բառարանի քննադատությունը և հավելվածն է: Նույնիսկ պարսկերեն բառի հնչման անորոշությունը նշան է, որ այդ բառը բնիկ պարսկերեն չէ: Ենթադրում եմ, որ դա հայերենից փոխառյալ բառ է և ծագում է **գովասան** բառից: Գովասան, ճիշտ ինչպես վիպասան և ճարպասան, հայերենի հնագույն բառերի շարքից է՝ իր -ան դերբայական մասնիկով և կազմված է գով-ել արմարից, իբրև «գովք ասող»: Այս բառը՝ վիպասան բառի հետ միասին, ներկայացնում է հին հայոց երգիչների մի փոխակը, որ պարապում էր իշխանների և թագավորների վրա գովքեր ասելով ու երգելով: Նրա համբավն այնպես էր փարածվել, որ հասել էր նաև Պարսկաստան՝ մեր հարևան երկիրը: **Նաքց է, թե գովասան բառը կարող էր դառնալ պրս. Gosan կամ gusan. այս մասին առարկության փոփոխություն, որովհետև ova կամ uva ձևի վերածումը o կամ u ձևին՝ անսովոր չէ պարսկերենում, ըստ այդմ հայերեն գուսան բառը պարսկերենից երբեք անվանված փոխառություն է:** Երկրորդ հարցն էլ այն է, թե կարող էր հայ երաժշտությունը Պարսկաստան անցած լինել կամ հարկապես նրա մի փոխակը ընդունված լինել նաև Պարսկաստանում: Պարսկական երաժշտությունը շատ հարուստ է, բառարանում կան բազմաթիվ բառեր, որոնք ներկայացնում են բազմաբնույթ եղանակի անուններ: Կան եղանակներ էլ, որոնք իրենց անունը ստացել են այսինչ երաժշտի անունից, կամ այնինչ երկրից և գավառից: **Պրս. Gosan բառն էլ համարվում է մի նշանավոր սրնգահարի անունից, որ կարող էր հայ եղած լինել և կոչել իրեն պարզապես «գովասան»⁶:**

5 «Տեախան հանրագիտարան», Երուսաղեմ, 1972, էջ 572-574:

6 **Վ.Աճառյան**, Նայերեն արմատական բառարան, հատ. IV, Եր., 1979, էջ 629:

Սեմական Արամի ծագումնաբանական հարցերը զբաղեցրել են նաև հայաստանյան մասնագետներին, մասնավորապես բանասիրական գիտ. դոկտոր Արմեն Պերրոսյանին, որի աշխարհայնությունը որոշ մեջբերումներ կանենք ստորև:

«Արմեն ցեղանվան և ցեղի անվանադիր նախնի Արամի հետ համեմատելի են արևմտաեվրոպական արամեացիների և նրանց աստվածաշնչյան էպոնիմի Արամ անվանումները: Տարբեր կարծիքներ կան այս հարցի վերաբերյալ, բայց հարևան ժողովուրդների այդ անունների միասնական ծագումը թվում է ակնհայտ (տես, օրինակ, **Դյակոնով** 1981, 55, ВДИ II 107, ուր ենթադրվում է, որ Արմեն երկիրը սկզբնապես նշանակել է լեռնային ժողովուրդներին հարևան արամեական մարզ, իսկ հետո՝ արամեացիներին հարևան հայկական շրջան, որի ուրարտական անվանաձևից էլ ծագում է հայերի արամեական անվանումը, որը և անցել է մյուս լեզուներին)»⁷: Ախլամու ցեղերի մասին Պերրոսյանը նշում է, որ որպես արամեացիներ նրանք սկսել են հիշվել Ն.Բ. ԺԳ դարից, ընդ որում դեռ երկար ժամանակ կոչվել են երկու անունով (ahlame armaia և այլն): Վկայակոչելով Օ՛ւալլազանին (տես RLA 131 հարմ., 1948, 95-96 և այլուր), Պերրոսյանը գրում է, թե արամեացի ցեղանունը պարզ է որ ծագել նրանց բնակության նոր վայրերի Ար(ա)մ -անվանաբանական փոփոխությամբ:

«Դարեհ I-ի արձանագրություններում հին պոսկ. Արմինային և էլամ. Խարմինային համապատասխանում է աքադ. Ուրաշտուն, որը տեսականորեն կարող է ցույց տալ, որ արմեն ցեղանունը բնորոշել է ոչ միայն հայերին, այլև հենց «ուրարտացիներին» (տես **Ղափանցյան** I 176 հարմ., որպեսզի Արամի համար, սեմական հիմքով իմաստավորման անհնարինությունն պարզաբանվի խոտիական ստուգաբանություն է առաջարկվում. **Բարսեղյան** 1964, 328, 1985, 5 և **Գ. Սարգսյան** 1991, ուր չեն հիշվում նախորդ աշխարհագրությունները): «Եթե դա այդպես է, ապա այդ անունը կարող էին նախապես կրել Վանա լճի շրջակայքի հայերը և (կամ) փոյուզացիներին ու մուշկերին ազգակից այն ցեղը, որի լեզվին էին պատկանում Ուրարտուի արքայական դինաստիայի անունները: Միևնույն անուններն ի հայտ են գալիս նաև բարբելական ազգածին առասպելներում՝ Քարթլոս(=Արմազի)-Մցխեթոս, համապատասխան Արամին և Մշակին: Ասվածի հիման վրա կարելի է կարծել, որ հայերին, արամեացիներին և թերևս փոյուզացիների մի մասին և «ուրարտացիներին» բնորոշ նույնաբանական ցեղանունը պարզ է բացատրվի որպես նրանց իրար մոտ բնակվելու և մեկից մյուսին անցնելու հետևանք, ընդ որում ցեղանվան ծագումը հնդեվրոպական է: Այդ հնդեվրոպացիները հենց կարող էին դառնալ նույնանուն, բայց փոքրեր ծագում ունեցող ցեղերի վերնախավը»⁸:

Տեղիական եզրահանգում է, որ Արամ փոքր պարունակող անվանումները հայրնի են Միջագետքում և Սիրիայում սկսած Բ.ձ.ա. Գ հազարամյակի կեսերից, և բազմաթիվ հեղինակներ Նայաստանի Արմենիա անվանումը կապված են համարում առավել վաղ հիշվող այդ ձևերի հետ:

Իր հերթին պարամբան Արամի Մովսիսյանը միջագետքյան Արամ տեղանունը տեղայնացնում է Ուրարտուի հարավի Արամալի -Արմառի(յա)լի երկրում, քանի որ պարզ է այդ բնակավայրի հայկական բնույթը, հեղինակը հիշում է, որ այսպեղի տեղանունների մեծ

⁷ **Ա. Պերրոսյան**, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Եր., 1997, էջ 158:

⁸ Անդ, էջ 160-161:

մասը հնարավոր է ստուգարանել հայկական հիմքերով (ըստ **Ջահուկյան** 1988): Ըստ Ա. Մովսիսյանի, Նայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում էր փեղայնացվում շումերական վիպական աղբյուրների Արարտա երկիրը (**Մովսիսյան**, 1992), որի անվանումը պարզորոշ համեմատելի է Արա Գեղեցիկի անվան նախաձևի հետ: Նաշվի առնելով ուրարտական Խաղիի և Արա Գեղեցիկի ֆունկցիոնալ ընդհանրությունները, այս երկիրը հնարավոր է փեղայնացնել Խաղիի պաշտամունքի կենտրոն Արդինիի շրջակայքում: **Պեպրոսյանը** նաև հավելում է, որ Նայկական լեռնաշխարհի և Նյուսիային Միջագետքի հարակից շրջաններում թերևս ի հայտ է գալիս հայոց մեկ այլ ազգածին նահապետի՝ Արամի որդու անվան փեղանվանական հնագույն գուգահեռը:

Մինչ դրան անցնելը նշենք, որ Պեպրոսյանն ուղղակի անհավանական է համարում, որ հայկական Արամ - Մշակ և մյուս նույնաբնույթ հնդեվրոպական հաջորդականությունից անկախ կարող էր գոյություն ունենալ նման սեմական ծննդաբանություն:

Ուշագրավ են Մշակի անվան վերաբերյալ փողերը, համաձայն որոնց, «մոտոք-մեսերը Մաշի անվան հունական ձևն է, որը և մերկ է մյուս թարգմանությունների մեջ, իսկ հին հրեական մշբ -ը (ըստ Դյակոնովի) վերակազմվում է որպես *mosk, mosak*: Մեր կողմից հավելենք, որ եբրայեցերեն մշեկ - *משק* բառը իմաստով լիովին համապատասխանում է հայերեն **մշակ** բառին և նշանակում է փրկավարող, աշխատող, բանող:

Այժմ անդրադառնանք Ուր քաղաքին, որի ծագման մասին փեղեկություններ են պահպանվել պարականոն Նոբելյանական (Jubilees) գրքում՝ ԺԱ 3. «Եւ Ուրը՝ Կեսեդի որդին, կառուցեց Խաղերի Արայի քաղաքը և այն կոչեց իր և իր հոր անունով» («And Ur the son of Kesed built the city of Ara of the Chaldees and called its name after his own name and the name of his father»)⁹:

Եւ այսպես, ըստ աստվածաշնչային հանրագիտարանի, Ուր քաղաքի փեղայնացման հարցով հեղափոխությունը զբաղվել են ավելի քան երկու հազար տարի: «Յոթանասնից» թարգմանության հեղինակները կամ ծանոթ չեն եղել Ուր քաղաքին կամ այն համարել են ոչ թե քաղաք, այլ սովորական «բնակավայր»:

Իսկ Յուսուփյանը, որն ապրել է Ք.ժ.ա. 150 թվականին, Ուրի մասին խոսել է որպես բաբելոնյան քաղաքի՝ Կամարինա անունով: Թալմուդը, հեղափոխում նաև արաբ գրողները, Էրեկը (նաև Օրեկ) համարել են քաղաք: Գրության սեպագիր ձևը Ուրնկի (Urunki) հաստատում է այդ փոփոխությունը, բայց մյուս կողմից նշվում է, որ Էրեկի մասին հիշատակվում է Ծննդոց գրքում: Ուրը գտնվել է Խաղերի մոտ և Միջագետքում հայտնի է եղել Ուրֆա կամ Օրֆա անունով, իսկ հույներն այն կոչել են Եդեսիա, որն առ այսօր քաղաք է:

Ա. Քլեյն առավել ընդունելի է համարում այն փոփոխությունը, համաձայն որի Ուրը ներկայիս Մուդեիրն է: Նորավային Բաբելոնում այն կոչվել է Ուրումմա կամ Ուրիմա, իսկ ավելի ուշ Ուրու և Ք.ժ.ա. առաջին հազարամյակում կոչվել է Խաղի կամ Խաղու: Իսկ Կամարինան կարող է կապված լինել արաբերեն Լուսնի կամարի հետ, որը վկայում է այդ քաղաքում տարածված Լուսնի աստծու պաշտամունքի մասին: Մեկ այլ կարծիքի համաձայն, Խաղա-

9 «The International Standard Bible Encyclopedia», Michigan, 1915: Ցավոք, մեջբերումը ոչ թե եբրայեցերեն բնագրից է, այլ Աստվածաշնչային էլեկտրոնային հանրագիտարանից, քանի որ այս պահին բնագիրը մեզ հասանելի չէ:

նում նույնպես փարածված է եղել լուսնի աստծո պաշտամունքը, որովհետև Ուրտման կամ Ուրիման Արրահամի ժամանակներում եղել է շումերական կենտրոն:

Վերոնշյալ թեման, անշուշտ, կարելի էր հարստացնել այլ փաստարկներով, եթե մեր ձեռքի փակ ունենայինք այն հսկայածավալ ուսումնասիրությունները, որ կարարվել են երբայագիտության բնագավառում: Այս թեմային անդրադառնալու մեր նպատակը պատմական հարցեր առաջ քաշելը չէր, այլ մի քանի օրինակներով ցույց տալը, թե բնագրային թարգմանությունները որքան կարևոր են հայոց պատմության հնագույն շրջանի ուսումնասիրության համար:

Ամփոփելով կարելի է ասել, որ Նայկական լեռնաշխարհի ներթափանցած սեմական ախլամու ցեղերը յուրացրել են ոչ միայն հնդեվրոպական Արամ անունը, այլև փեղաբնիկների սփռված մշակույթը: Այս թեման բազմաշերտ է, ի հակասական փնտակներով ու պնդումներով, քանի որ իր մեջ կրում է մշակութային ժառանգության խոր հետքեր: